ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ «ՍԻՆԴԵՍՄՈՍ»-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Հունվարի 20-26-ը Սանկտ Պետերբուրգի Հոգևոր Ակադեմիայում տեղի ունեցավ Ուղղափառ Եկեղեցիների «Սինդեսմոս» միջազգային երիտասարդական կազմակերպության ուղղափառ աստվածաբանական դպրոցների յոթերորդ խորհրդաժողովը, որի մեկշաբաթյա նիստերին մասնակցում էին 50 երկրներից հրավիրված 100 ներկայացուցիչներ:

«Սինդեսմոս»-ը (հունարեն՝ միություն) գործում է 70-ական թվականներից և նպատակ ունի միավորել Ուղղափառ Եկեղեցիների երիտասարդ հոգևորականներին և աշխարհականներին, կապեր հաստատել աստվածաբանական դպրոցների, երիտասարդաց միությունների և նման այլ կազմակերպությունների միջև, ինչպես նաև մեծապես նպաստել փորձի ու գիտելիքների փոխանակմանը:

Ասենք, որ «Սինդեսմոս»-ի հերթական խորհրդաժողովը նվիրված էր երիտասարդ սերնդի հոգևոր կրթության բարելավման ու առավել կարգավորման խնդիրներին:

Խորհրդաժողովը բացվեց Սանկտ Պետերբուրգի Նորին Սրբազնություն Վլադիմիր միտրոպոլիտի օրհնության խոսքով: Ապա, դիմելով մասնակիցներին, միտրոպոլիտը ողջունեց նրանց և մաղթեց բարեհաջող աշխատանքային շաբաթ:

Մեկշաբաթյա նիստերի ընթացքում քրիստոնյա Արևելքում աստվածաբանական կրթության և երիտասարդության հոգևոր դաստիարակության գործում նրա դերի մասին զեկույցներ կարդացին Ռուս, Հույն, Ֆին և մյուս Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Ցուրաքանչյուր զեկուցում ուղեկցվում էր ակտիվ քննարկումով, առաջադրվող հարցերին տրվում էին սպառիչ պատասխաններ:

Այս տարի առաջին անգամ խորհրդաժողովին մասնակցում էին նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչները՝ Գնորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին սաներ Արթուր սարկավագ Հայրապետյանը և Մամիկոն սարկավագ Ավետիսյանը:

Համաձայն նախնական պայմանավորվածության, Մոսկվայի Սուրբ Գրային աստվածաբանական ինստիտուտում վերապատրաստման եռամսյա կուրսեր կարող են անցնել Հայաստանյայց Եկեղեցու Հոգևոր դպրանոցներում դասավանդող ուսուցիչներն ու քահանաները: Ինստիտուտը պատրաստ է Հայոց Եկեղեցուն տրամադրել նաև համապատասխան հոգևոր գրականություն:

«Սինդեսմոս»-ի հերթական խորհրդաժողովն իր աշխատանքներն

ավարտեց փակման հատուկ արարողությամբ, որը նախագահեց Սանկտ Պետերբուրգի Հոգևոր Ակադեմիայի տեսուչ գերաշնորհ Կոնստանտին եպիսկոպոսը:

Մեկշաբաթյա նիստերն ավարտվեցին հատուկ կազմակերպված վերջին ընթրիք-հավաքույթով, որի ընթացքում յուրաքանչյուր Եկեղեցուց մեկ պատվիրակ իր շնորհակալության ու երախտիքի խոսքը հղեց ինչպես համաժողովի կազմակերպիչներին, այնպես էլ բոլոր մասնակիցներին:

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու հրաժեշտի խոսք ասաց Մամիկոն սրկ. Ավետիսյանը:

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ